ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N858-Ա 26 դեկտեմբերի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 9.1 հավելվածը, ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզապետի աշխատակազմին «Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը » միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 342149100 (երեք հարյուր քառասուն երկու միլիոն հարյուր քառասունինը հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 342149100 (երեք հարյուր քառասուն երկու միլիոն հարյուր քառասունինը հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության թվով 70 (յոթանասուն) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար (գլխավոր ֆինանսիստ) Սիմոն Մանուկյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

26.12.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503